

Երեւութաբանութիւնը Եւրոպայի մէջ իր ազդեցութիւնը տարածեց, նախ Գերմանիոյ ապա Ֆրանսայի մէջ, շնորհիւ հետեւեալ գերման եւ ֆրանսացի փիլիսոփաներուն.-

➤ **Մ. Շելեր** (գերմ.՝ Max Scheler, 1874 – 1928 թ.),

ընկերաբան-փիլիսոփան, այս նոր ուղղութիւնը, երեւութաբանութիւնը, օգտագործեց՝ բարոյագիտութեան, կրօնի փիլիսոփայութեան եւ փիլիսոփայական *մարդաբանութեան*⁽³⁸⁾ (Anthropology) ոլորտներուն մէջ: Ան դարձաւ նաեւ արդի մարդաբանութեան կարեւորագոյն դէմքերէն մէկը:

Իսկ Շելերի բարոյագիտութեան մասին պիտի անդրադառնանք հետագայ՝ «*Նիւթական արժէքի բարոյագիտութիւն*» („Material Value-Ethics“) բաժնին մէջ (Էջ 119):

➤ **Մ. Հայդեգեր** (գերմ.՝ Martin Heidegger, 1889 – 1976 թ.),

որ Հուսեռլի նշանաւոր աշակերտն էր: Ան իր ուսուցչի Երեւութաբանութիւնը զարգացուց եւ վերածեց՝ *հիմնական Էաբանութեան* (Fundamental Ontology): Հայդեգեր հետեւած է նաեւ՝ Վ. Դիլթայի Կեանքի փիլիսոփայութեան եւ Ս. Կիրկեգորի Գոյութեան փիլիսոփայութեան: Իր գլխաւոր երկը կը նկատուի «*Գոյութիւն եւ ժամանակ*» (1927 թ., գերմ. բնագիր՝ „*Sein und Zeit*“, անգլ.՝ „*Being and Time*“), ուր Հայդեգեր կը ներկայացնէ իր՝ *հիմնական Էաբանութեան* փիլիսոփայութիւնը:

Մ. Հայդեգերի անձը կը մեղադրուի, անոր հակաժողովրդավարական ու ազգայնամոլ «Նացիոնալ-սոցիալիստական գերմանական բանտորական կուսակցութեան» (NSDAP), 1933 – 1945 թ. անդամակցութեան պատճառով, ինչպէս նաեւ՝ այս մասին հետագայ իր լռութեան պատճառով: Իր երկերու զանազան գրախօսականները եւս ծանրաբեռնուած են, վերոյիշեալ պատճառներով:

➤ **Ն. Հարտման** (գերմ.՝ Nicolai Hartmann, 1882 – 1950 թ.),

որ թէեւ երեւութաբանութեան անմիջական հետեւորդ մը չէ եղած, սակայն Հուսեռլի հետ, միասին, երեւոյթներու վերլուծման կը միտէր: Հեռանալով Նոր-Կանտականութեան (Neo-Kantianism) Մարբուրգեան դպրոցէն, Հարտման որդեգրեց աւելի առարկայական-իրապաշտական դիրքաւորում մը՝ կեցութեան եւ ճանաչողութեան մասին:

Ասոր կողքին, Ն. Հարտման, կը միանայ Մ. Շելերի երեւութաբանական հիմք ունեցող՝ *արժէքի բարոյագիտութեան*, որու մասին, ինչպէս նշեցինք, պիտի անդրադառնանք հետագայ՝ «*Նիւթական արժէքի բարոյագիտութիւն*» („Material Value-Ethics“) բաժնին մէջ (Էջ 119):

(38) **Մարդաբանութիւն** (Anthropology) փիլիսոփայական ուղղութեան մասին, տե՛ս Մաս – 2, Էջ 109: